

Ա.Հ.Ս. ՄԱՍՏԵՆԱՅՈՐ

14 JUL 2009
թիւ 13

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՃՈՒՐԴ ԻՒՐ



ԽՈՐՃՈՒՐԴ Ե Ց

ԽՐԿԱՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Քնող ամէնը 2000 օրինակ տպագրուած է, որոնց ամբողջ հասոյթը
պիտի յատկացուի Վանայ Վարազայ վանքին վարժարանին՝ Նպաստից
Յանձնուածողովոյ միջոցաւ:

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Ա. Խ. Գ. ԶՈՐԳԱԿԱՆ ԵՊՐԱՅՐ

Ա. Գ. Ո. Լ. Բ. Ա.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱԼԵՆՑ - ԱՐՁՈՒՄԱՆ

Չարմարձըլար Յակովեան Խան

1909

115
Խ - 91

5

91

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՃՈՒՐԴ ԻՒՐ

— — —

ԽՈՐՃՈՒՐԾ ԵՑ

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Էնդ առևիլ 2000 օրինակ տպագրուած է, որոնց ամբողջ հասոյթը
պիտի յատկացուի Վանայ Վարազայ վանքին վարժարանին՝ Նապսառից
Յանձնաժողովոյ միջոցաւ:

ՀՐԱՏԱՐԱԿԻՑ

Ա. Ե. Պ. ԶԱՐԴԱՐԵՍԱՆ ԵՊԵՍԱՐԲ

Ա. ՊՈԼԻՍ

1909

ԱՌ ՄԵԾԱՐՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑԴ ԻՄ

ԵՒ ՄՏՏԵՐԻՄ ՍԻՐԵԼԻ (*)

Ամենացուն ժամանակ է եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից:

Ժամանակ ծնանելոյ էւ ժամանակ մեռանելոյ. ժամանակ սնկելոյ էւ ժամանակ խլելոյ զժնկեալն. ժամանակ սպանանելոյ, եւ ժամանակ բժշկելոյ. ժամանակ հակելոյ էւ ժամանակ չինելոյ. ժամանակ լալոյ էւ ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ էւ ժամանակ կախւելոյ. ժամանակ ցրելոյ բարին էւ ժամանակ ժողովելոյ բարին... ժամանակ խրնդրելոյ էւ ժամանակ կորուսանելոյ... ժամանակ պատառելոյ էւ ժամանակ կարկատելոյ. ժամանակ լրելոյ էւ ժամանակ խօսելոյ. ժամանակ պատերազմի էւ ժամանակ խաղաղութեան:

Սոլոմոն, Գիրք Ժողովողի. Գ. Գ. .



63866-67

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
ՊԱԼԵՎԵՅ - Ա.ԲԶՈՒՄԱՆ,

№ 2

ՊԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԽԻԾ ՄԱԿԱԳՐՈՎ ՄԻ ՔԱՅԻ ՏՈՂ ՔԱՅԻ ԽՈՐԲՐԴՈՅԵցի Էւ Ի ԳԻՐ ՀԱՅԻ, զոր ԶԵՐ Ազնիւ անուան կը նուիրեմ. Եւ դու որ բան, զիր ու զիրք ու յառաջիմուրին կը սիրես, կը խնդրեմ որ յօժարամիս զայն ի լոյս հանել ԶԵՐ անձնանուեր ձեռնուուրեամբ. Եւ ձեզ նման զիր ու բան սիրող Հայոց երիտասարդաց դուն նուիրես, որպէս զի կարգան ու խելամիքն քէ ի՞նչ է ժամանակ եւ իւր անյայ խորհուրդներ, եւ ո՞չչափ ժիրող եւ նզօր է:

Երկնից Նախախնամուրին իւր ամենիշխան զաւագնը ժամանակին ձեռք տուեր է. որ կը վարէ եւ կը կառավարէ մեր աշխարհ ինչպէս ոսիրկան մի:

Հեք ժարդոյն կեանք՝ ժամանակի յարաւած փոփոխութեան մէջ կը տարութերի միւս հողմագար լինելով որպէս չորացած խորիր: Միայն սոսկական եւ ստրուկ մարդ չէ որուն վերալ կ'իշէս ժամանակ, այլ եւ աշխարհիս նզօր զահեր նոյն անգօր խորիներու պէս կը տարութերին:

Եւրոպա ժամանակի խորհուրդ բողոք էւ այժմ իւր նրանք Թուրքաստանի վերայ դարձուց. մարդ չէր հաւատար որ հինգ հարիւր տարեկան Թուրքիոյ պառաւած եւ ամուլ Մար երկնելով երկնելով հին աշխարհնի համար նոր Մանուկ Սահմանադրութիւն մի ծներ: Ննաւ, այո՛, եւ ստրկացած ժողովուրդներ իրեւ ազատաւար կը համարին զայն. բայց տես-

(*) Ռւղղուած է գրքին առաջին հրատարակիչ Պ. Համբարձում Աճեմանի:

ԱՌ ՄԵԾԱՐՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑԴ ԻՄ

ԵՒ ՄՏԵՐԻՄ ՍԻՐԵԼԻ (*)

Ամենեցուն ժամանակ է եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկից:

Ժամանակ ծննդելոյ եւ ժամանակ մեռանելոյ . ժամանակ սնկելոյ եւ ժամանակ խլելոյ զննկեալն . ժամանակ սպանանելոյ , եւ ժամանակ բժշկելոյ . ժամանակ հակելոյ եւ ժամանակ չինելոյ . ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ . ժամանակ կոծելոյ եւ ժամանակ կարաւելոյ . ժամանակ ցրելոյ բարինս եւ ժամանակ ծողովելոյ բարին . . . ժամանակ խրնդելոյ եւ ժամանակ կորուսանելոյ . . . ժամանակ պատառելոյ եւ ժամանակ կարկասելոյ . ժամանակ լրելոյ եւ ժամանակ խօսելոյ . ժամանակ պատերազմի եւ ժամանակ խաղաղորդան:

Սողոմոն, Գիրք Ժողովողի . Գ. Գ. .



63866-67

ՏՈԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՑՈՒՆ
ՊԱԼԵԽՆՅ - ԱՐՁՈՒՄՄԱՆ

№ 2

ՊԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՃՈՒՐԴ ԻՒԹ մակագրով մի բանի տող բան՝ խորհրդածեցի եւ ի գիր հանի, որ Ձեր ազնիւ անուան կը նուիրեմ . եւ դու որ բան, գիր ու զիրք ու յառաջդիմութիւն կը սիրես, կը խնդրեմ որ յօժարամիսի զայն ի լոյս հանել Ձեր անձնանուեր ձեռնուուրեամբ . եւ ձեզ նման գիր ու բան սիրող Հայոց երիտասարդաց դուն նուիրես, որպէս զի կարգան ու խելամին քե ի՞նչ է ժամանակ եւ իւր անյալ խորհրդներ, եւ ո՞րշափ տիրող եւ նզօր է:

Երկնից Նախախնամութիւն իւր ամենիշխան զաւազանը ժամանակին ձեռք տուեր է . որ կը վարէ եւ կը կառավարէ մեր աշխարհ ինչպէս ոսթիկան մի:

Ճեֆ մարդոյն կեանք՝ ժամանակի յարաւարձ փոփոխութեան մեջ կը տարութերի միջև հողմագար լինելով որպէս չորացած խոխը : Միայն սոսկական եւ սորուկ մարդ չէ որուն վերայ կ'իշխէ ժամանակ, այլ եւ աշխարհիս նզօր զաներ նոյն անզօր խոխւներու պէս կը տարութերին:

Եւրոպա ժամանակի խորհուրդ բողոք եւ այժմ իւր նրանք Թուրքասանի վերայ դարձուց . մարդ չեր հաւատար որ հինգ հարեւ տարեկան Թուրքիոյ պառաւած եւ ամուլ Մայր երկնելով երկնելով հին աշխարհին . համար նոր Մանուկ Սահմանադրութիւն մի ծներ: Ծնաւ, այն՝ եւ սորկացած ժողովուրդներ իրեւ պատարաց կը համարին զայն . բայց տես-

(*) Ուղղուած է զրքին առաջին հրատարակիչ Պ. Համբարձում Անդմանի:

ցուք թէ զայեակներ ի՞նչպէս պիտի պահեն զայն որ ապրի երբ նոր վերածնած մանուկ Թուրքաստան կռուով ու սրով մանկակուոր կը լինի:

Դժիւմ ժամանակ երկու ձեռք միանգամայն բերաւ Թուրքաստանին վերայ. նոր Օրէնք՝ Սահմանադրութիւն բերաւ, որ նաև յաւիտենական աւերակներ տինէ. պատերազմ բերաւ, որ նորա հին աւերակաց վերայ նորանոր աւերակներ կուտէ:

Բայց աշխարհի պատմութենէն, կարգէն ու դրութենէն այնպէս կ'իմանանք, որ ի վերջոյ յաղթող ժամանակ պատերազմին անդոզ ձեռք կարենելով՝ կ'ընդարձակէ խաղաղութեան եւ յառաջդիմութեան ձեռք. եւ ինչ որ ժակեց պատերազմ. Սահմանադիր Օրէնք, հաւասարութիւն եւ ազատութիւն զայն կը ցինեն:

Եւ այս իսկ է ժամանակին գործ ու խորհրդանշան, որ աշխարհն խալուելով եւ շինուելով միշտ յառաջադիմէ: Անտուս ամեն հնութիւն պէտք է բանդուի. այլ միրէ ինչ որ այսօր կը շինեմք եւ զայն նոր կը հաւարիմք, կը մնա՞յ: Քա՛ւ. այն եւս կը կորնչի եւ կը մնայ միայն Յաւիտենականն, ըստ Սաղմոսին. «Նորա կորնչին եւ դու կաս եւ մնաս յաւիտեան»:

ԽՐԻՍՏՈՆԵ ՀԱՅՐԱԿԱ

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ

Ով յաւիտենական ժամանակ, քո խորհուրդ, քո գործ և քո նպաստակն ի՞նչ է, չըգիտենք. երկնակամարին վերայ պայծառ լուսագունտ մի ունիս, զոր արեւ կը կոչեմք, և որ անհուն բարձրութենէն ճառագայթներն արձակելով մեր այս երկրագունտ կը լուսաւորէ և կը չափէ մարդկային առօրեայ կեանք:

Քո արեւուն տակ մերկ կը ճնի մանուկն, նոյնգունակ մերկ կը մանմի. գիտես թէ մէկ ձեռքովդ մանուկներն խանձարութի մէջ կը պատես ու կ'օրօրես, միւս ձեռքովդ զանոնք կը տանես գերեզմանին մէջ կը թաղես: Ասա՛ մեղ, գերեզմանին մէջ կը թաղես: Ասա՛ մեղ, գերեզմանին ու խանձարութին միջոցը ո՞րչափ է. և մինչ մացրեր եղերամայր կը լինին, կուլան և կ'ողբան որդեկաց գերեզմանին վերայ, դու կը ծիծաղիս և ծափ կը զարնես:

Մերթ որպէս թէ ինայելով կը թողուս որ մանուկն աճի ու զարգանայ. գո՞ւ արդեօք մարթ գաւազան կու տաս ձեռք որ մանուկ թագ կազէ թագաւոր լինի, մերթ ևս կը թողուս որ սորկանայ. մերթ ազատ և երջանիկ, և մերթ սորտեկ ապերջանիկ, մերթ հարուստ և մնատառուն, մերթ աղքատ և անանիկ, մերթ հանգիստ և մերթ չարչարեալ:

Սակայն ո՞վ հզօր և տիրող ժամանակ, մարդիկ թէ մեծ լինին և թէ փոքր, ոչինչ փոյթ է քեզ, դու զամշնք հաւասար կը ճանաչես, հաւասար զատասատն կ'տանես, և քո արդարութիւն այս է որ թագաւոր և սորուկ, աէք և ծառայն զամէն միահամուռ մանուռան ստուերին տակ դնելով՝ հողն հոգով կը ծածկես և կը կոչես հէք մարդոյն կեանքն ու վախչ ձանք:

Ո՞վ գերիշխան ժամանակ, քո դաւազան միահեծան է . աշխարհի հայաբացող գահերն այնպէս կը կարծն թէ չկայ ամենիշխան տէր մի որ կը տիրէ թագերուն վերայ, թէ չը կայ ամանաղօր ձեռն մի որ թագեր կու տայ և կ'առնու, և թէ չը կայ գերագոյն դատաւոր մի որ թագերուն դատասասնը կը տեսնէ :

Այս', կը խոստովանի՛մք, ո՞վ իշխող ժամանակ, որ դու մեր աշխարհի փայլուն թագեր և գահերն ոտքով կը տարուարերն և կը խաղաս, ինչպէս կը խաղայ մանուկն իւր գնտակին նետք :

Այսպէս չը խաղացի՛ր Մակեդոնացի դիսցազն Աղէքսանդրի նետ . Յունաստանէն մինչեւ ի Բարիլոն վարեցիր այդ ջախջախիչ աշխարհակալ զնոտակը, որ աշխարհիս լեռները տասլալեց ու հարթեց : Ժողովուրդի արեան մէջ թաւալզլոր խաղալով զնոտ հասաւ մինչեւ Բարիլօնի վիճը, հոն զարկիր զնտակը և զլորեցիր մահուան փոսը, ասելով՝ Ցայս վայր էր քո աշխարհակալութիւն, անդր ևս մի՛ անցանկիցիս :

Այսպէս խաղացիր դու նաև Ֆրանսիոյ դիսցազն միծն Նարօլէնին նետ . այն հրացեալ պողպատէ գնտակն որ խոյն ժամանակի մէջ աշխարհէ աշխարհ զլորելով սիտի փշրէր իւր ծանրութեան տակ բոլոր ազգեր և գահերը, Վաթէրլոյի դաշտին մէջ վրան հասար, ձիոյն աննձ բռնեցիր և մի հարուածովդ զլորեցիր զնտակը մինչեւ Ովկիանու . Ս. Հեղինէ կրպին, որ հրացեալ աշխարհակուլ գնտակ պաղեցաւ իրեւ ջուր, փշրեցաւ և մոխիր դարձաւ գտաւազնիդ տառաջ :

Ո՞վ ժամանակ, հին աշխարհ իւր հին աշխարհականերով, իւր հին շենքերով և գերութեան շլթամերով ջախջախեցիր ու անցար . հին աշխարհին յաջորդեց նոր քաղաքակիրթ աշխարհ, զիստութիւն, արուեստ, ճարտարութիւն այնչափ յասաջաղիւմեց, որուն վերաց կը զարմանան և կ'առջին մարդիկ, և շատ անդամ չեն հաւասար թէ այդ ամեն՝ մարդուն աշխատութեան և նորա հայրագէտ հանճարոյն արգասիքն են :

Փո՛ղովաւրդ, ելէք, յոտին կացէք, բարեւ բանեցէք, զի եկաւ նոր քաղաքակիրթ աշխարհ և կ'ողջունէ մեզ, այլ զգու-

շացէք, ժողովուրդ, դարձեալ սուր կայ ի ձեռին և կը միտէ ժողովուրդին կողը : Միթէ նոր քաղաքակիրթ աշխարհին գաւհերը հին աշխարհակալաց ոգին, փառասիրութեան տեսչ և զահ գահին վերաց յաղթանակ տանելոյ փառք փոխեց արդեօք :

Ո՞չ, ո՞չ, այլ առաւել ևս զօրացաւ ու զայրացաւ այդ ոգին, որ ահաւասիկ ազգ ազգի գէմ և թագաւորութիւն թագաւորութեանց գէմ կ'որոտաց կըրութի թնդանօթով, և կ'ըսպանան միմնանց նետն ու յիշատակ ջնջել աշխարհին երեսէն :

Ո՞վ կը հաւատաց այլ ևս թէ կուող գահերն երեսն կը միանան, զիրեար կը զրկէն, ուխտիւ խաղաղութեան դաշնակցութիւն կը կապեն և ինսամով կը զրէն զայն մազաղաթին վերայ որ չպատասի և անջնջ մեայ : Բայց մեր դարուքաղականութեան սոսկալի դիւնազիստութիւնը եթէ չկարենայ այդ մազաղաթի խաղաղութեան զահնազիրը մի մասով պատեկը, սուր ժանիքներով կը պատոէ և արագ-արագ պաւերազմի հրավարակը կը զրէ :

Ո՞վ իմաստուն ժամանակ, մեկնէ՛ մեզ, պատերազմ դու կը բերես թէ պետական մարդոց փառասիրութիւն կը հնարէ զայն . կամ թէ նախախնամով արդարութեան մի թագուն խորհուրդն ու զազանիքն է, որ ծածկուած է մեր տեսութենէն : Այլ քա՞ւ թէ այնպէս կարծեմ որ մարդասէր նախախնամութիւնը պատերազմի դաշտին երեսը ծովացած մարդոց պատոյժ արխիսով կը զւարձանաց :

Ո՞վ աներեւոյժ և անծանօթ ժամանակ . մեծն Սոլոմոն քո փափոխական երեւոյթները պէտպէս զոյներով կը նկարազրէ . «Ամմանայն իրաց ժամ է և ժամանակ . ժամանակ պատերազմի և ժամանակ խաղաղութեան . ժամանակ շինելոյ և ժամանակ քակիւյ . ժամանակ կորուսամելոյ և ժամանակ իրնդրելոյ . ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ . ժամանակ խօսելոյ և ժամանակ լուելոյ» :

Եւ ես կը յաւելում առ այս . ժամանակ ստրկութեան և ժամանակ աղաւութեան . ժամանակ չարչարանաց և ժամանակ փրկութեան . ժամանակ զրկանաց և ժամանակ հատուցման . ժամանակ կործանելոյ և ժամանակ կանգնելոյ . ժամանակ ինքնահրատան պետութեան և ժամանակ Սահմանադրութեան :

Ո՞վ խորածածուկ ժամանակ, ի՞նչ խառնակ ու հակառակ երեսովներ ունիս թշուառ մարդոյն համար, որոց կեանքն անանջբակտ մի խառնուրդ է երջանկութեան և ապերջանկութեան մէջ: Ո՞հ, ի՞նչ անօրինակ ներդաշնակութենէ կազմուած են մարդոյն կինաց լարեր, որ կը հնչեն արագէս մերթ խնդութիւն և մերթ տիրութիւն, ծնունդ և մահ, խել և տնկել, շնել ու քակել, ծիծաղն ու լաց, կոծն ու կաքաւ, կոփեն ու խաղ, սուրն ու համբոցը, խաղաղութիւն և պատերազմ, աղաստութիւն և սորկութիւն, խօսիլ ու լսել և այցն: Ի՞նչպէս հնար է որ մարդն սովորի, ացս գահավէճ եղեւէջներուն մէջ անկասկած վարէ իւր կեանք և նաւարկելով երթաց իւր նաւահանգիստ գտնէ:

Ո՞վ մարտագոռ ժամանակ, ասա՛ և գուշակէ մեզ, մարդ մարդոյ դէմ, ընկեր ընկերի դէմ, ազգ ազգի դէմ անփնայ կը պատերազմի, սպիտակ դաշտեր արիւն ջրով լուացինք, մեր ճակատամարտ կոստրեցինք և կոստրուեցանք, մարդոց դիակները և կառափներ գահերու տակ գլորեցինք որ բանութիւն և փառասիրութիւն յագենաց: Արդեօք խաղաղութեան ցանկալի ժամն հասա՞ւ:

Ո՞վ սեերիչ ժամանակ, բազում ժամանակ է որ արեեւեան երբեմն մեր բարգաւաճ և հարուատ աշխարհ հիմնայստակ քանդուեցաւ, չէն չէն գիւղեր և քաղաքներ առ ի չգոյէ ընակչաց սեերակ դարձան, մնացորդ ժողովուրդ հայրենիքն հեռացած պանդխառնութեան մէջ անսարդ ծառայութեամբ կը չարչարուի: Արդեօք վերաշնութեան ժամն հասա՞ւ:

Ո՞վ կորուսի ժամանակ, դո՞ւ արդեօք տարար և քո անցելոյն մէջ կորուսիր ու թաղեցիր Արևելեան աշխարհին հնա փառքն ու վայելչութիւն, տարար ու կորուսիր տառաքինի քաջազնաց արիսկան յաղթանակները, տարար և կորուսիր նաև Հայկաց տան փառքն ու հարաստութիւն և մեր նախնեաց մնացորդ նշխարներ. և զարդիս տարար և կորուսիր մեր կեանք, հացն ու վաստակ. ո՞հ: Արդեօք մեր կորատեան գիւտի ժամն հասա՞ւ:

Ո՞վ սոյոց եւ սղաւորաց ժամանակ. Աւետարան երանի կու տայ սղաւորաց, այլ մինչեւ յերբ սղունք ու լսնք, միթէ մեր աշխարհ մնուելոց աշխարհն է, մեր կեանք գերեզմանն է, մեր գոյութիւն ոչնչութիւնն է, մեր բնակութիւն բանն է,

մեր կապանք յաւիտենական շղթայ է. ո՞վ Տէր, ժողովուրդ վի եղեւ տրտմութեամբ: Արդեօք իւր միախթարութեան ու խնդութեան ժամն հասա՞ւ:

Ո՞վ զրկանաց ժամանակ, զրկեալ ժողովուրդ աղաղակելով հասաւ իւր յոյս, հասաւ իւր շոնչ և ձայն, հնձող մշտկներուն բողոք դեռ չհասաւ երկինք, Բիւրաւոր զրկեալներ դատաւորաց տուներուն տուաջ իբրև այրին այն ժանելով թախանձելով՝ դաս երաւունք, կը ինոդին: Արդեօք դատաստանի և իբրաւուց հասուցման ժամանակ հասա՞ւ:

Ո՞վ ջախջախիչ ժամանակ, վարիչ կառքիդ անփներ կարծրակուռ երկաթ են և ժամնիքներդ պողպատէ, միշտ անսահման հողավելուլ ջախջախեցիր ժողովուրդին կատագն ու պարանոցը, սոք, սրունք, բարձք առ հասարակ խորուակիցաւ, անզգացացաւ, ժողովուրդ գարձաւ մի անյարիր սնդամալոյծ, ո՞վ կարող է զինքն յարուցանել այսունետեւ. —միայն արդար, հաւատար և աղատ Օրէնք: Արդեօք զետնաթաւալ մնուելատիպ ժողովուրդին վերանորոգ յարութեան ժամն հասա՞ւ:

Ո՞վ ժամանակ, դու զիտես որ հարուածող գաւաղանին տակ սորկական երկիւղով փակուած ժողովուրդին բերանն ու լեզուն՝ որ իւր կեսնք պահելու համար սովորած էր միայն լուութիւն պահել և ապասկուլին դէմ անմուռնչ կերպով միւս երեսը դարձնել, եթէ մերթ ընդ մերթ ազատ մամուլ իւր ազատութեան ճիգ և ձայն հանէր, այն ևս կը հնչուէր իխտաօրինաց ներքեւ. տասի մեր աշխարհի զրկանաց և անիբաւութեան բազմատեսակ վերքեր միշտ ծածուկ մնաց, վերջապէս նեխեցաւ ու փանցաւ, ամնն ոք դարման, դարման կ'աղաւ զակեն: Արդեօք խորհեղ, զրելոյ և խօսելոյ ժամանակ հասա՞ւ:

Հասա՞ւ, հասա՞ւ այն աղաստարեր ժամանակ. քեզ առետիս կու տամ, ժողովուրդ, լրուած լեզուդ և փակուած բերանդ բա՛ց այսունետեւ, խօսիր և զրէ՛ որչափ առնմանադիր Օրէնք քեզ աղաստութիւն կու տայ, խօսի՛ր երբ կը զրկուիս. խօսի՛ր դատաւորաց առաջ երբ սպիրատ ձեռք զքել կ'ապատուկեն. խօսի՛ր և իրաւունք ինդրէ, «եթէ չար ինչ խօսեցաւ, վկայեա՛ վասն չարին. իսկ եթէ բարի՛ բնողէ՛ հարկանես զիս»: Գիտցիր որ աղատ Օրէնք զքեկ չի փրկեր, եթէ դու դարձեալ սորկութեամբ վարուիս քո սոսի դատախազիդ առաջ:

Ո՞վ բարեգուշակ Ժամանակ, որ բարի եկիր մեր աշխարհ
քեզ կ'ակնկալէր և կ'սպասէր Թուրքաստանի հինաւուրց Մայր՝
որ ամուլ էր և հրաշխէք յղացաւ. յաւ երկունք կալաւ զինքն
իրը ծննդականի. երկնեց երկնեց և այսօր ծնաւ մեզ համար
մի նոր մանուկ Սահմանադրութիւն։ Ցնծացէ՛ք, սորուկ ժու-
ղավարդ, ցնծացէ՛ք և ողջունեցէք այս նորածին մանուկ և
միանդամայն աղօթեցէք որ կայտառ մեայ, ապրի, զօրանայ և
զարգանայ ի կատարեալ հասակ։

Ո՞վ նորածին մանուկ Սահմանադրութիւն, քո մայրն
զքեզ արիւնով մկրտեց և բաղում զոհերով տօնեց քո տօն,
որպէս զի Նախարարնամութիւն քո կեսնք պահէ և զու մեծնաս
նոր կեսնք տաս մեր աշխարհի մեռած ժողովուրդին, որոյ
վերածնունդ կենդանութիւն քո ձեռքն է միայն, զի այսպէս
կը վկայեն աշխարհավար խմասաւն վարիչները. և միթէ
փորձն ինքնին չի հաստատեր։

Մի՛ զժկամակիր, ո՞վ զժուարածին Մայր, որ մանուկը
ցաւօք և հեծութեամբ ծնար և մարդոց արիւնով մկրտեցիր
զայն. զու արեւելան կեղրանին մէջ կը բնակիս, ինքնին խե-
լամուտ եզիր, այնպէս չփարձես որ այդ գեպքը քեզ միայն
զիսկցաւ, վասն զի Արևեմուեան աշխարհի մայրերը խիստ
զժնդակ ցաւերով ծնան Սահմանադրութեան մանուկ, անհուն
արիւնով և զոհերով մկրտեցին զայն. փա՛ռք տուր Աստուծոյ,
զու չա՛տ բախտաւոր մայր ևս. չե՞ս տեսնար որ ամէն աշխարհ
կը սիրեն և կը գորովեն զքեզ. մանաւանդ մեծն Ովկանոս,
որ քո ինտոմակը և կնքանային է։

Ազատութիւն տուր, ո՞վ մանուկ Սահմանադրութիւն,
ազատութիւն կը ինորեւ քեզմէ որ առ քո մասուցիչ զայեակ-
ներն ազատաբար խօսիմ. զի այլ ևս չեմ կարող հին ծառա-
յուկն սորեւութեամբ խօսիլ։

Ո՞վ գուք . . . որ նորածին մանուկ Սահմանադրութեան
իրեւ խմաստուն զայեակ կը հանդիսանայք աշխարհի առաջ,
առագ աշքով հակեցէք այդ մանկան վերայ, պինդ զրկեցէք
և զուրգուրալով պատապարեցէք զինքն որ սառնամանեաց
հովէն չգողաց և հարսուց կիզիչ արեւէն չտագնապի։

Եւ գիտէ՛ք ու կը տեսնէ՛ք քաջ որ թէ՛ օտար և թէ
նոյն իսկ մեր աշխարհին մէջ դորա թշնամիներ շատ կան, որ
կը շրջին ամենուրեք: Գուցէ դարան գործեն տղէտ ու իսա-
ւարտգնաց մարդիկ, անտեսանելի մժութեան մէջ զողնան
այդ մեր սիրական մանուկ և կամ անդէն իւր խամճարուրին
մէջ հնակելով ու նեղելով խեղգեն։ Եւ ինչ կը լինի յայնժամ,
զիտէ՛ք դուք, ո՞հ, Յետինն չար քան զառաջինն։

Տքնեցէ՛ք ու բեմին, տքնեցէ՛ք որպէս անգուն պահապան.
հզօր կամքով զինեցէք ամեն գարանագործ թշնամնաց դէմ,
շուրջանակի պատնէշ վակելով՝ մանուկ Սահմանադրութիւն
ընդ մէջ առնելով ողջ պահեցէք որ երթալով աճի ու զօրա-
նայ, իւր օրէնքով արեէ ևւ ուղղէ թուրքաստանի աշխարհա-
վարութեան ուղին։

Ահաւասիկ այդ զարգացած Մանուկն է որ Եւրոպիոյ քա-
ղաքակրթութիւն կը ներմուծէ մեր հին աշխարհ. հին ժողո-
վուրդ նոր օրէնքով կը վերանորոգի և Օսմանեան կայսրու-
թեան տան ազատ գաւաղան յայնժամ Սահմանադրական թա-
գով կը փառաւորի։

Շատ անապան մնացինք, ափսո՞ս, խելամոխնք այսուհետեւ,
հին աշխարհի ժամանակն իւր օրէնքով անցաւ, նոր ժամանակ
նոր օրէնք կուտայ մեզ, զի նոր մարդիկ նոր օրէնք կը խընդ-
րեն։ Հին զարերու նախազարմունք այլ ևս ծերացաւ ու
զառամեցաւ, պէտք է մեռնի, և աշխարհէս բարձուի իւր յի-
շատակ, որ եղծեց ու ապականեց արեւելան մեր կայտառ աշ-
խարհ։ Այսուհետեւ մեր փրկութիւն, մեր կեսնք և մեր շահն
այն է միակ որ ընդունիմք արևեմուեան ալգաց լրցն, օրէնք
և քաղաքակրթութիւն և այն ամեն յառաջդիմութեան ճանու-
պարհ, յորում նոքա յառաջացան անցան քան զմեզ, և մեք
յետ մնալով՝ ո՞հ, կը թափառիմք այսպէս խտորեալ ու մո-
լորեալ անհետ ու անել բաւիզներու մէջ։

Ո՞վ զժբարդ արեւելք, տամաց և եղուկ քեզ, բոլոր
ճոխութիւններդ կապանցաւ քեզմէ. Նախարանամութիւնը
զրախափ զարաստանը քո մէջ անկեր էր, անմանական ջու-
րերու գետերը զաշտերուդ վերայ կը վագէին, երկիրդ բարե-

բեր և լեռներդ բոլոր արծաթի և ոսկեհանքերով լի են, չգիտեմ թէ ինչո՞ւ համար դու այդպէս հէք, թշուառ և անձարակ մնացիր:

Եկան հասան վերջին անձկոթեանդ օրերը, դու յայնժամ հաղիս ուրեմն ուշարերեցիր, աչքու բացիր յանկարծ տեսար որ քաղաքակրթութիւն իւր ճարտար գիտութեամբ քո չէն դրախտն Սրեւրէն Սրեւմուաք փոխազդեր է. պահ մի զարմացար և յետոյ ներքին պատճաններն հետազօտելով հասկցար որ հակող պահապաններդ քնացած էին:

Եւ ուր էր նոցա հանդիսան բարձն ու քնարան. այդ ծառեկ տեղ մի չէ, արեւն առաջն է. ևս կը տեմնամ և աշխարհ կը տեսնայ զայն. նոր Հոռվմ և հին Բիւզանդիոնն է, Վասիրի չնաշխարհիկ ափունքն է. անդ քնացեր էին խոր ի քուն աշխարհի հակող պահապաններ. անդ կը տեղացին Սպիտակ և Աւել ծովերէն համայն թուրքաստանի ժողովուրդին գանձն ու վաստակ և տակաւին բաւական չէր, զի Հոռվմայ վերջին և հին Բարիլոնի անշախաւոր զեղսութեան կեանք անդ նորոգուած էր, այսր մայրաքաղաքին մէջ ճոխածեմ ասպարանքներ կը բարձրանային և գաւառներում զիւզն ու քաղաք կը քանդուէր:

Ո՞վ շայլող Ժամանակ, եկատ հասո՞ւ արդեօք այն ճշդող և անտեսող ձեռք, յորում ասհմանաղիր Օրէնք և ճշմարիս քաղաքակրթութիւն մեր նոր Հոռվմայ անկոստար կեանք տրնտեսութեամբ չախաւորէ և մեր աշխարհի պետական վարիչներ ճոխութիւն արդարութեամբ վայելին, յիշելով աշխատող ժողովուրդին զրկանքն ու չարչարուած կեանք:

Եթէ այսպէս չինի, և նոր Հոռվմ իւր խորդ չփոխէ, զի՞նչ կը լինի արդեօք այս ներկային ապագայ հետեւանքն. — այն կը լինի որ աւասիկ եղեւ ու կատարեցաւ և տակաւին կը լինի: Աւա՛զ, որ անագան զգացին խելամոտող ողիներ, որոց ձեռքն էր Պետութեան վարիչ առնձ. թէ երբ հարատանարիչ ծանրացող ձեռք ժողովուրդին տուն ու տեղ քանդէ, այնուշեւ մտարերել պէտք է թէ երջանիկ Վասիրին վասոքն ու բարձրութիւն կանգուն կը մնայ:

Ո՞վ Ժամանակ և Սահմանադրութիւն, պիտի կարձէ՞ս այս առնետե այն հարստանարող կողոպտիչ ձեռք, որ հողագործն եղները լծերէն չարձակին և մածակալ՝ պահար առնելով՝ տրիւն և արցունք վաղեն իւր վարած ակօններու մէջ, ուր պէտք էր ցորենահատեր ցանուէին, հաց բուռնէր: Տէրութիւն իւր տասանորդն առնէր, զիւղականին ամբար ցորենով լեցուէր և արքունի գանձարան ոսկեհաններով: Ո՞վ չգիտեր որ երր և արքունի գանձարան վակեաններով: Ո՞վ չգիտեր որ երր հաց պակսի, հետեւապէս գանձն ևս կը պակսի. երկրին կենդաւ նութիւն հացն է, և ո՞վ կարող է ապրիլ առանց հացի:

Ո՞վ Ժամանակ և սահմանադրի Օրէնք, պիտի կարձէ՞ք այսունետե կաշառակուր դատաւորաց ձեռք. որ պատրուակով չխաղան քեզ հետ՝ ինչպէս խաղացին մինչև ցարդ Տէրութեան օդինաց գորքերուն հետ. Օրէնք, Օրէնք ասացին և առանց արդար օրինաց գործեցին. առհասարակ դատաւորակոն աթուներու վերաց տիրեց օրինաց զեղծունն, և երկրին դատաւորները «Օրէնտրութիւն՝ բանութիւն մեր եղիցի» ասելով բանաբարեցին զրկեալ բողոքովին իրաւունքը:

Ո՞վ սահմանադրի Օրէնք, զու պիտի քննես, փորձես և ընտրես մեր երկիր կասավարող արժանաւոր և կարող պաշտօնեաներ, հանձարեղ ծերեր և իմաստուն խորհրդականներ. էլ պիտի լրես և թողուս, որ բառ սուածնոյն պիտական մարդոց կամանած ընթացքը շարունակէ, զոր դատելով դատեց ու կտամբեց կայսերական հրավարակի: Ա՛հ, եթէ այնպէս լինի, կը ոչնչանայ երկրին վերանորոգութեան յոյն. զու կը մնանիս կ'ոչնչանայ վերանորոգութեան յոյն. զու կը համարուիս. քեզ ակնկալող ժողով թէ մեռած տառ մի կը համարուիս. վակ ակնկալող ժողովուրդ պիտի սատի ողբաց քո ճնունդ և մօտահաս մահդ:

Ո՞վ պարտուց և իրաւանց հաւասարութեան Ժամանակ, ո՞վ Սահմանադրութիւն՝ որ կու գաս օրէնքով թագաւորել, պէտք պիտի հանէք ու բառնա՞յք Օմաննեան տէրութեան երկու գուած պիտի հանէք ողինին թշնամութեան, սոնելութեան ըին այլեւացլ ժողովրդոց սրտէն թշնամութեան, ի միանին, մի և խարութեան վէս ողինի, որ գան միանան ի միանին, մի ամբողջ միութիւն կազմն Մահմէտական և Քրիստոնեաց ժողովուրդներ, թողուն այն չին ու յասիանական սին ու մողովուրդներ կը պատկան վաստական պատկան այդ լեռանդութիւն վաստական պատկան կը պատկան այդ:

համառակ տարերքներ, Տաճիկ, Յոյն, Հայն, Հրէտյն զիրեար ովչունեն իրեւ համաքաղաքացի ժողովարդ, և ուխտի իրեն ու պահն այն դաշնադրութիւն՝ զոր սահմանադիր Օքէնք կը նորիրագործէ:

Եւ ինչ է այս հզօր դաշնակցութեան ուխտն, որ 0սմանեան պետութեան դանազան ազգերն մի կազոլ կը կապէ ։ այս կազն է մը միայն անփափիր հաւասարութիւն։ Այս՛, հաւասարութիւն իրաւանց և պարտուց մէջ, հաւասարութիւն երկրին օրինաց առաջ, հաւասարութիւն հայրենեաց ժառանգութեան մէջ, հաւասարութիւն վիտուց և պատույ մէջ, հաւասարութիւն զինուկրութեան և զինուորութեան մէջ, հաւասարութիւն քաղաքացիութեան և ազնուականութեան մէջ, հաւասարութիւն ուսման և յառաջդիմութեան մէջ, հաւասարութիւն արեան և անձնանուիրութեան մէջ, հաւասարութիւն արժանաւոր վարձուց մրցանակին մէջ, ահաւասիկ ա՛յս է սահմանադիր օրինաց անփափիր հաւասարութեան կշիւն ու ձշգրիտ պատկեր :

Ո՛վ Սահմանադրութիւն, զքեղ կը ճանաչեմ որ ճարտար քիմիագէտ ես, եթէ մարդիկ թուղուն քեզ, դու անզոյդ անբազագրելի ազգերու տարերքը հաւասարութեան քուրացիդ մէջ կը գնես, կը հաղես և զաման ի մի կը ծուլես։ Փորձենք այս անզոյդ ացդ քո ճարտարութեան հրաշք, տեսցուք, ինչ որ Արևեմեւոն աշխարհին մէջ գործեցիր՝ մեր անպատճառ Արևելեան աշխարհին մէջ պիտի յաջողիս։

Կը տարակուսիմք քեզ համար, ո՛վ Սահմանադրութիւն, թէ ի՞նչպէս պիտի շրջիս մեր մութ և աներեւոյթ աշխարհին մէջ, մեք այնպէս պիտիմք որ լոյս, դասախարակաթիւն և զիտութիւն մրշա քո յառաջընթաց կարսապետն են, դու առանց քո կարսապետն եկար մոտար մեր աշխարհ։ Զգիտեմք, լոյս հետ քեզ պիտի բերես թէ առանց լուսոց խարիսափելով պիտ շրջիս, և չկարենաս տեսնել այն մնամենձ վհեր որ կը բացուին քո առաջ, զգնչէ, զգնչէ, յուշիկ յուշիկ անցիր։ մի զալիք այն զոներուն՝ որ քո զէմ փակուած են, որպէս զի քո խիստ և խոժոռ երեալ չունան։

Սնազատրաստ ժողովրդոց լնդարձակ հրապարակին մէջ համարձակ քալէ ։ լնսաւ մի կասկածիր որ անուսումն ժողովուրդն ստամբակի, դրօշակ բանայ և մաքասի քո դէմ ։ զի դու նորանշան, անձանոթ երեւոյթ մի եռ նորա աչքին, նա իրաւունք ունի զքեղ չճանաչելու երբ դու նորա հարազատածին զաւակ չես ։ օտար ես և օտար աշխարհին կու գաս ։ քո միտքն ի՞նչ է ։ մեր հին աշխարհ վերանորոգել, մեր նախապաշարմունք բառնալ և մեր հայրենիք ժառանգել կուզես ։ Արեւմուքը զբանեցիր, արդ ելար որ Արևելքն ի՞ւս գրաւես ։

Գրաւէ՛, զբաւէ՛ ։ ժողովուրդ կամովին քեզ անձնատուք կը լինի, զի քո ձեռն ազգասարար է ։ դու մի՛ վհասիր թէ անդէտ ժողովուրդին հեալ ի՞նչպէս պիտի վարուխ։ հին երկաթէ ձեռք բարեւոք դասախարակեր է մեր աշխարհի ժողովուրդ ։ Հարասահորութիւն, աղքասութիւն և ծանրասար տառապանքներ առհասարակ կորացուցիր են ժողովուրդին լծալսորթ պարանոց, որ անդիմադարձ պատրաստ է յօժարափոյթ կրել քո դիւրասար լուծ։

Դու զիտեմ ու կը ճանաչես մեր Արևելեան ժողովուրդը, որ առանց զիտաթեան լնապէս ճարսպիկ է, և այնչափ գուենիկ չէ որ չիտնաց իւր ազատութեան և յառաջդիմութեան պայմաններն ։ Այս՛, կան կարծիք և մարդիկ, որք տիրապետական ողին փայփայելով և միշտ վասքուս լինելով կը խօսին և կը համոզին այսպէս թէ զես մանուկ է մեր աշխարհ։ զես չզիտէ կարգալ և զրել, զես ընարաւթիւն չունի, ո՞րպէս կարէ որոշել իւր հայրենեաց շահն, բարին ու չար, անպէտն ու պիտանին, ուկին ու պղինձ, արծավին ու կապար :

Այսպէս երբ զքեղ իրեւ անուս և անշնորոգ մանուկ կը զատեն, ժողովուրդ, ո՞վ է մեզաւոր, զոււ թէ քո սնուցիչ զայեամիներ, որք իրզե օտարամայք՝ կաթ և ուրիշ զօրացուցիչ կերակուր ինսպիցին քեզ, ցամաք հացով և կորեակով ասպեցար, սրափի և լերզիփ արիւն ցամքելով՝ ողջ կեսնորդ ծաւրեցու, քո մանս և վախճան մօս եր, անազան ուրիշն զգացին խորհրդական բժիշկներից, աճապարհցին զեզ և զարման անձնիկ քեզ համար, որպէս զի հանցեալ ծերութիւնդ երիտասարդամաց և զու նոր կեսմաքով վերածնիս :

Քո դեղն և դարման ի՞նչ է, զիտե՞ս, ո՞վ սարկացած մահամբձ ժողովուրդ, ազատութիւն և քաղաքակրթութիւնն է. և այն է միակ որ պիտի բառնայ զիտե՞լ կովահարիչ հարաւաներ, որ քո ազատ ուղեղը ճնշելով ճնդեց. ո՞հ, չթողուց երբէք որ դու ազատ խորհիս, ազատ խօսիս, ազատարար ճանչնաս քո պարուքն և քո իրաւոնք, զոր կը սահմանադրէ անդամագաս Օրէնք:

Օն ուրեմն, միացեալ ժողովուրդ Թուրքաստանի, սիրէ՛ այսուհետեւ քո սահմանադր Օրէնք, պարտիքներդ վճարէ՛, իրաւոնքներդ պահանջէ. մինչև ցարդ անդէտ էիր. այսուհետեւ զիտցիր պարտուց և իրաւանց հաւասարակը շուռթիւն պահել. մինչև ցարդ ամեն զրկանոք վարուեցան քեզ հետ, ծանր ծանր պարտիքներ պահանջեցին քեզմէ և իրաւոնքներդ զլացան. միշտ զրկուեցար ու բողոքեցիր, բայց քեզ ոչ ոք լսեց. այսուհետեւ սպորեցար անմուռնչ միալ միշտ կարիքներուդ առաջ:

Ահա, տակաւին պահանջազներդ այսպէս կը կարծեն որ դու իրրեւ ալիւրի պարկ մի ես և դեռ անսպաս փոշիներ կան քո մէջ. ուստի զարնելով զարնելով զասարկ պարկիր փոշիներ հանին. այսպէս որ տաշտիդ մէջ հաց չմնաց և զրպանիդ մէջ մի լումայ. իսկ հարուածեալ պարկդ փարատ փարատ եղաւ. Այդ շատ բնական է. երբ հացդ բարձուի, այսուհետեւ հնա՞ր է որ դու մնաս:

Տեսնալով որ պատառ պատառ եղար այժմ, քո նորուգիներ զքեզ կարկասել կ'ուղեն. չզիտեմ այլեւ կարկաս կը բունին, թէ հնացեալ ձորձիդ վերաց անթափ կապերտ ձկելով տեհի ես պիտի բացուին հնութեամբ պատառտածներ. կամ իբրեւ նոր զինի ին ամիկերու մէջ լեցուելով, նոր զինույն եւ ուացալ զօրութենէն ամիկեր պատուին և զինին կորնչի: Այս օրինակը շատ ձիշդ է Թուրքաստանի ժողովուրդին համար, զոր ցոյց կու տոյ մեզ Աւետարանի ծշմարտութիւն:

Կը վհասի՞ս արդեօք, ժողովուրդ, երբ անդարման վիճակիդ նկարագիր կը հանեմ մի՛ խոռվիր, մի՛ տաղնապիր. մահանացուաց խորհուրդ և դասաստանը թիւր է. մարդիկ կար-

ճամփոտ են. ինչ որ մեր առաջ անհարին կը թուին, երկնից նախափնամութեամ առաջ միշտ հնարաւոր են:

Ո՞վ կը հաւատար եթէ մի քանի դար յառաջ պատմէին մեզ, որ օր մի Սրեւմտեան աշխարհի վայրենացած ժողովուրդ զգօնանայ, զիտութեամի բարձրանայ, քաղաքակրթութեամբ բարգաւաճի և այսօր համայն աշխարհի օրէնք տայ և նախանձելի օրինակ լինի:

Այսպէս նաև, ո՞վ ապերջանիկ Արևելք, ո՞վ կը հաւատայ, եթէ մարգարէանամ քեզ համար որ դու ևս օր մի երջանիկ եւրոպից փառաց ու բաղդին պիտի տիրանաս. և այն փառաւոր ապագայի ներկայն այժմէն սկսար. երանի թէ զայն տարա հանես և յաղթանակես հնութեամ և նախապաշտրման վերայ:

Թերեւ կը հոգաս և կը տառամսիս յոյժ, թէ քաղաքակրթութեամ աշխարհաշինութիւն լինչպէս պէտք է հիմնարկել և հաստատել անկացուն և երերուն երկրի մը վերաց՝ ուր շատ հաղուազիւտ են իմաստուն ճարտարապեաներ և շինութեամ յարմարագոյն քարեր. զի մեր աշխարհի քարեր համակ անտաշ են, ոչ նախաձեռն դաստիարակութիւն տաշեր, յղիկը է և ոչ քաղաքակրթութիւն չափակցութեամբ պատրաստեր է. հապա զիա՞րդ նար է քար քարի վերաց զնել որ զիրեար չեն բոներ, և աւարտել այն մեծագործ չէնքը՝ որ մեր անպատապար աշխարհին հզօր պարիսան է. զի այսուհետեւ Զինական քարէ պարիսաներ անպէտ են. միայն քաղաքակրթութիւն կը պահէ աշխարհ:

Այս՛, ե՛ս էլ կը վկայեմ քեզ հետ որ աշխարհաշինութեամ քարերդ զիտութեամ արուեստով տաշուած և քառակուսի չափուած չեն. բայց զիտե՞ս թէ քանի՞ ազնիւ և բնական յատկութեամբ գեղեցիկ են մեր աշխարհի քարեր. շատ մարմարմարինի հանքեր ունիմք որ ամեն շինութեանց յարմարութիւն ունին, միայն թէ շինող ճարտարապեաներ իմաստուն և յառաջատես լինին:

Ափանս, հաղա՛ր ափառ, որ մեր աշխարհի մէջ զեռ ամեն բան երերուն և անհաստատ է. շատ անդամ շինող ճար-

տարապետներ և պատուական անկիւնաքարեր ի միսասին կ'ա-
նարգուին . եթէ ազատումիտ հերոսներ ջանան մէջ ձեռքով
շնորհ, խարութիւն, հսութիւն և նախապաշարմունք միւս
ձեռքով կը քանդեն :

Թող քանդեն որչափ ոյժ ունին . քանդողներ միշտ աւե-
րակաց տակ կը մնան, գերեզման կը ծածկէ զիրենք և նոր նոր
շնորհներ կը ծնին : Այսպէս է այս աշխարհի գործն բուն աշ-
խարհի սկիզբէն . մարդիկ միշտ շնորհով և քանդելով յառաջ
կ'երթան . բաց ի վերջոյ քանդողներու ձեռք կը լքանի,
նկուն կը դառնայ և շնորհներ կը յաղթանակեն . զի միոյն
գործիքներ տգիտութիւն և հնութիւն են, իսկ մրւացն՝ գի-
տութիւն, քաղաքակրթութիւն, և սահման՝ արդարութիւնն
է : Միոյն առաջնորդ խաւար, խակ մրւացն՝ լոյս և զիտու-
թիւն . միոյն իշխանութիւն սուր, իսկ մրւացն՝ ազատ Օրէնք :

Բո՛ւն հար, բո՞նէ այդ ազատ Օրէնք, ո՞վ թուրքիոց
ալեկոծ ժողովուրդ . քանի՞ ժամանակ է, ո՞հ, որ կը ծփաս ու
կը տարուրերիս մի լաստափայտի վերայ, որոյ համար կ'ասեն
անցուներ թէ կապերը քայլքայտած են և դու սակալիկ մի
ևս անդեկալար, անսապաէն մնալով՝ պիտի խորասուզիս սեւաւ
և ձերմակ ծովերու ընդդիմանար ալիքներու մէջ . եղո՛ւկ քեզ,
քո գերեզման ծովերու անդունդներ պիտի լինին . կէտ ձուկ
խոր բերան բացած պիտի կանէ զքեզ և դու ևս Յովանու-
պէս ձկնափոր կինդամի գերեզմանին մէջ փակուելով խորան-
դունդ գժոխքէն ձայն բառնաս և ազալակես առ Տէր Ասո-
տած քո :

Օրէ՛նք սիրէ, ժո՞ղովուրդ, օրէնք սիրէ . Սահմանադրու-
թեան երեսէն մի՛ փախչիր որ քեզ համար նոր ամրակապ
լաստափայտ մի է, որ ժամանակ հրաշիւք բերաւ քեզ Ովկիա-
նու ափունքէն . ապաւնիր այդ օրինագիր լաստին, զոր բա-
զում դարեր հաղիւ կերտեր են զայն և դու պատրաստակազմ
զտար :

Այլ թէ տակաւին դանդաղիս, տակաւին մեղկանաս ու
մերժես քո վերջին ապաւնին լաստափայտն, տակաւին պաշտես
քո հին կարծիքն և ասես որ «Մէր աշխարհ նոր օրէնք չի սի-

րեր, մեք հսութեան մէջ ծնանք, պէտք է հսութեան մէջ
մեռնինք . զի հսութիւն՝ մեր խանձարութն է, պէտք է նաև
մեր պատանք լինի :

«Ո՛չ, ո՛չ, չկամիմք փոխել մեր աշխարհի մութ գոյն և
մեր մորթ՝ զոր բնութիւն մութ ներկեր է . չկամիմք ճանշնալ
մարդկանց հաւասար իրաւաւնք զոր պետական Աստուած մեծ
և փոքր ատեղծեր է . միթէ փոքրիկ ձիներ մեծերուն կերա-
կուր չե՞ն, ինչպէս որ ճնճղուկներ որսական բազէին . ո՞չ ա-
պաքէն բնութեան կարգ և օրէնք այս է բավարդակ աշխար-
հին վերայ, որ միշտ զօրաւորներ ակարծներուն տիրեն :»

Մի՛ հաւասար, ժողովուրդ . այդ վարդապետութիւնը
ափրապետաց ոգին ստեղծեր է, մարգասէր և արդար Աստու-
ծոյն չէ . զի ընդհանուր մարդկութեան կոչումն և կեանք՝
ազատութիւն, արդարութիւն և հաւասարութիւն է Երկնից
առաջ և աշխարհիս քաղաքակրթութեան օրինաց առաջ :

Հանէ՛ք այդ հսութի հանդերձներ, հանէ՛ք ով թուրքաս-
տանի հսանէր ժողովուրդ, հանէ՛ք ձեր անձէն և փոխեցէք,
ինչպէս կը փոխէ օճն իւր չապիկ . այսուհետեւ դուք այդ պա-
տառաստուն զգեստով կարող չէք աշխարհի առաջ շրջիւ և
քաղաքակրթութեան հրապարակի վերայ երեխի, և կամ թէ
երթալ եւրոպից աշխարհամտոլ արուեստահանդէսին մէջ
մտնել, ցոյց ատլով թէ դուք ևս քաղաքակրթութեան բա-
ժանակից ազգ էք և արեւելան ճարտարութեան օրինակ : Ի՞ն,
կը յիշե՞ս արդեօք քո անցեալ ազնուականութեան շուքն ու-
պերծութիւն, որ քան զամնն աշխարհ վեհ ու փառազարդ
էիր :

Այլ յացնէ՛ մազ, մի՛ ծածկեր, ով անցայտ ժամանակ .
դու որ զմարդկացին ազգ բիւր ձեւերով և գաղափարով ձու-
լեցիր մինչեւ ցարդ և տակաւին նորանոր քաղաքակրթութեամբ
կը ձուլես, ասա՛ մեզ, Արեւելք՝ որ իւր հին ազգերով մինչ ի
գերեզման խոնարհներ է, այլ ևս պիտի բարձրանայ արդեօք,
ազագայ զարերում լինչ կը պատրաստես դու . Արեւելից անկ-
եալ ազգերուն համար, ես զիտեմ . չըջող անիւներուդ վերայ
առնելով աշխարհիս ազգերը՝ կը դարձնես, կը դարձնես, զո-

մանս ի վեր կը հանես և զոմանս ի վայր կը տանես, և մերթ ևս անխներուդ տակն առնելով կը ջախչախես և միայն մնացորդ նշխարներ կը թողուս աշխարհիս վերայ:

Ժողովրդոց մնացորդ նշխարներ դարձեալ յուսպից աչքով քեզ կ'ապասեն, ո'վ ժամանակ արդեօք այդ փոշխացած և միանդամայն ողջ մնացած նշխարներն՝ որք աշխարհիս հզօր ու արիով առիւծներու ժամփքներուն մէջ ծախուելով ծախուելով տակաւ տակաւ կ'ապասեն. պիտի բերե՞ս այն աղաւառիթեան օրը, զի այդ փոշխացած նշխարներ մեռելութեան մոխրոց մէջէն յառնեն ինչպէս փխճիկ, կրկն վերակենդառութիւն ստանան և Աստուծոյ աղաւառատեղծ մարդիկ՝ մարդոց բոհացող ժամփքներէն աղաւին:

Ո'վ ժամանակ, ժողովրդոց յոյս միշտ կենդանի է և չեն թերահաւատիր, այլ կը հաւատան միշտ թէ դու պիտի բերես այն գուշակեալ սկեղար, յորում գոռող առիւծն՝ աշխատաւոր եղին հետ բնակի, ինձն ուլին հետ մակաղի, բարձր գտներ, չին հպարտութիւնէն խոնարհին և ժողովուրդ աղաւառիթիւն համբուրէ:

Բարե՛, կը կասկածիմ ևս թէ մարդոց այս մեծ հաւատութեացոյս է, զի հպարտութիւն և փառասիրութիւն, քանի որ աշխարհ կայ, մարդոց հետ պիտի ապրի և ածի. վասն զի այդ կրից արմատ մարդոց սրախն մէջ ընդարսյու ու բնական է. պանծացող գիտութիւն կարող չէ զայն մեռուցանել առանց Աւետարանի գերապանծ սիրոյն: Այո՛, միայն Աւետարանի սնիրթ կրօն՝ որ անձնանուիրութիւն և զոհողութիւն կ'ուստացանք. այո՛, այդ միայն կ'ապաննէ մարդկացին անձնանէր հպարտութիւն և նորա կամակոր կրից կատաղութիւն:

Ուկին, հարսաւութիւն, գտնս և թիուանօթ միշտ գաշնաշիր կը մեան աշխարհիս վերայ, ժողովրդոց ընկերնաշտառեան մրութիւն այս հզօր գահնակցաց դէմ պիտի մրցի մինչեւ ի կատարած աշխարհի. թէ իմաստուն և՛ գուշակէ՛ այժմէն թէ ո'վ պիտի յաղթահարէ:

Տէ՛ր ամանիշխան որ կ'իշխես ժամանակին վերայ, զի ժամանակն և զայն չափող արե և լուսին քո կամակատար

արբանեակներն են. և կը հաւատամ քեզ, ո'վ Տէր, որ դու միայն ժամանակին սանձ ձեռքից առնելով տիեզերք կը կառավարես, ամէն բան քո յաւիտենական օրինաց համեմատ կը վարես և մարդոց բժժուած աչքերէն բոլորովին կը ծածկես ժամանակին խորհութեալ: Անցեալը՝ մեր մոռացիոս մաքէն կը հանես. ներկայն ալօս նշմարանքով փոքր ի շատէ ցոյց կուտաս և ապագայն՝ քո անհաս խորհրդեան մէջ միշտ թագուն կը պահես:

Ուրեմն ասա՛ մեզ, ո'վ Տէր, որ չարն ու բարին աշխարհիս վերայ ելեէջ կ'առնեն, մերթ մին և մերթ միւմն կը տիւրէ, և մարդիկ սովորած են ասել՝ ժամանակ չար է կամ բարի. արդեօք չար օր և չար ժամանակն դու կը կոչես և կը բերես զայն աղղաց ու ժողովրդոց վերայ. ինչպէս կը վկացէ մարդարէն թէ առանց քո ձեռին՝ ժամանակն ինքնիշխանաբար կը գործէ այս աշխարհիս մէջ, մերթ բարին բերելով և մերթ չարն:

Եթէ այսպէս, ապա ուրեմն չարն ու բարին ժամանակի արդարիքն են, և մարդիկ նախասահմանաբար սարկացած են ժամանակի բուռն և անխուսափելի իշխանութեան տակ. ուղորմնի մարդիկ հարկիւ. կը վարին ու կը մզին իբրև խոխի փոթորկին առաջ. հարկիւ աղղեր կը զօրանան ու կ'ընկճին. հարկիւ գահներ կը կործանին և կը կամոցնին. հարկիւ այս աշխարհի ամառ աղդ ժամանակի պատահարաց ենթակայ է:

Ո'չ, ո'վ Տէր, ո'չ. մարդիկ կը թիւրեն դաստաստանը եթէ այսպէս դատեն. մարդիկ անգիտաբար կը զրպարեն զժամանակն, որ քո բարերար ձեռքին պարզեած կեանքն և լոյսն է:

Եւ ինչո՞ւ համար այսպէս դատել կ'ուզեն մարդիկ, այդ քեզ յայսնի է, Տէ՛ր սրտապէտ. որպէս զի մարդիկ քո դաստաստանին փախչելով անմեղալիր մեան և քեզ պատասխան տալու ժարհին, պատճառելով զպատճառս մեղաց թէ՝ մեղինչ մեղ կայ, չարիքներ ժամանակ բերաւ. և մեք առ ի հարկէ հակամիտեցանք չարին:

Խոնարհելով երկնից առաջ կը խոստովանիմք, Տէր, և

մեր խղճի գիտակցութեամբ կը վկայեմք թէ՝ չարիքները չարաբուեստ մարդկանց գիւտն է և մարդն է հեղինակ չարեաց ու բարեաց . զի նորա պատմն մէջ կայ ու կը դարանի չարութեան և բարութեան գանձ . և երբ ուզէ զայն ազատաբար ի դուրս կը բղիէ , որպէս ասաց Քրիստոս :

Սանձակոծէ' , ո՞վ Տէր , սանձակոծէ և փակէ չարագիւտ մարդկանց բերան , որ միշտ չարիքներ բղիսելով հեղեղի նման չխեղդեն բարիքները . զի անսնք քո հաւաստացեալ զաւակներն են , իսկ չարիքներն՝ աշխարհն . բայց դու քո անհուն անկշիռ մարդամիրութեամբ երկուքին վերայ ևս հաւասար կ ածես արեղ և անձրեղ , որպէս զի քո անխափի բարերարութեամբ ապաշնորհ մարդկանց խատարատութիւնն ամոքես , որ ճանճան քո անարիաւր բարիքն ու երախափիք , դասնան չարութեաչն ու պաշտեն զքեզ :

Բայց քո երկիւղած ծառաներ զիտեն ու կը հաւասառն և չեն երկպայիր , ո՞վ Տէր , որ դու այս աշխարհը բարձրագոյն խորհուրդովդ կը կառավարես . չարն ու բարին ի մի կառք զուգակցելով յառաջ կը վարես , ինչպէս անմիաբան հակառակ տարերք . չարերն աշխարհէս չես հաներ , այլ կը թողուս որ բարիներուն հետը միշտ մրցին , չարութիւնն պարտի և առաքինութիւնն յաղթանակէ . ո՞վ , ո՞րչափ զարմանալի է քո խորհուրդ , ո՞վ Տէր , որ առաքինեաց պասկ չարերուն ձեռքով կը հիւսես . և չարն՝ որ չարազիւտ մարդկանց հնարքն է , դու զայն ի բարին կը շրջես :

Մարդիկ կամ որ անզիտապար գանգատ կը բառնան նախախնամութեանդ զէմ և կ'ասեն թէ՝ ինչո՞ւ կը թողուս որ չարերն առաւել աճին ու յաջողին աշխարհիս վերայ . ինչո՞ւ համար գալթակլութեան բարերը մարդկացին ընկերութեան մ.ջէն չես բառնար որ միշտ տկարներու . վերայ իյնալով կը ջամփախեն . ինչո՞ւ համար փուչերը անկեր ևս ծաղկաբուրաստնին մօտ , որ քո հոտանոց ծաղկիներդ խազթոցահար լինին ; Միով բանիւ , կ'ասեն , թող չարերը բոլորովին սրբէ աշխարհէս , որ բարիներ ազատ մնան և առաւել պաղպակեր լինին :

Սակայն միթէ դու մարդոյն անզէտ խորհրդո՞վ կամ դա-

տաստանո՞վ կը կառավարես աշխարհ , յորում դու միայն բարի սերմն սերմաննեցիր , իսկ չար որոմն թշնամի մարդ ցանեց . հրեշտակ ծառաներ տեսան ու զարմացան և զեկուցին քեզ որպէս թէ դու զայն չգիտես . հրաման խնդրեցին որ զորոմն ցորենի արտէն ի բաց խելով որոշեն , որպէս զի բարի ցորեաններդ անխառն մնալով բարգաւածին :

Կարձամիտ մշակներ խորհուրդ տուին քեզ , ո՞վ խորհրդոց Տէր , այլ դու երբէք չը կամեցար անսալ . թողէք , ասացիր , որ երկու բոյսերն ես ի միասին աճին մինչեւ հնձոց ժամանակ : Ուրեմն քո պետական կամքն այն է որ թէ՛ ցորեան և թէ՛ որոմն , թէ՛ բարին և թէ՛ չարն խառն ու հաւասար աճին ու ազըին աշխարհիս ազարակին մէջ . որով ցոյց կու տաս թէ դու բարիները չարերով կ'որոշես , և չարերը՝ բարիներով . ի վերջոց բարերոյս ցորենահասներդ արքացութեանդ չտեմարանը կը ժողովես , իսկ չար որոմն և անապէտ յարդը անշէջ կրակին կու տաս , որ ծարձատելով ացրին ու տոչորին : Այս է քո արդար հասուցումն նոցա համար , որ քո ծառաներ աշխարհիս վերայ զրկելով ու հարատահարելով չարաչար տանջեցին :

Ո՞վ երկնացին Սէր , որ մարդոյն սիրով այս աշխարհ երկիր , որպէս զի անձամբ տեսնաս ու կրես մարդոյն քաշած վիշտն ու տառապանք . Երիքալի ծամրուն վերայ չօշափեցիր չարչարուած մարդկութեան բոլոր վէրքեր , կը թողուս այլ ևս որ աշխարհիս բուռն փորձութիւնն իւր ծանր գաւազանով տակաւին տիրէ ու ճնշէ սորկացած մարդոյն վերայ , որ մինչեւ ի գետին կորաքամակ եղեր է :

Կը թողուս այլ ևս , Տէր , որ չարերերը չարութեամբ զօրանան և չարաչար բոնապատն քեզ հա՛ւատացով ծառաները . դու ուսուցիր մեղ ազօթել միշտ երկնից Հօր , որ իւր որդիքը չարերուն ձեռքէն փրկէ , և չուց փորձող ժամանակին ձեռք , որ անինաց հոլովելով հոլովելով իւր անիններուն տակ կարատէ մեր կեանք ու բառնաց մեր հոգին : Մեք ևս յայնժամ Բարիլնի գերեվարեալ ազգին պէս անյուսաբար կոչեմք , «Տէր , հատաւ յոյս մեր և մնուաք» :

Այլ ևս կ'աւարտեմ փանաքի խորհրդածութեանս բան ,

խոսոովանելով որ մեր մանկամիտ մոռածութիւն և խորհուրդ՝
անդիտութիւն է քո առաջ . Ժամանակին աէր դո՛ւ ես , և
դու միայն գիտես նորա անյայտ խորհուրդը : Մոխիր է մար-
դոյն սիրտ որ չհաւասար թէ դու ինչ որ կը կամիտ և կը վճռես
Երկնից պետական աթոռէդ , այն կը լինի աշխարհիա վերայ :
Անշուշտ դու ևս քո երիտամարտաբաղաքին մէջ ատեան և
դատաստան ունիս . աշխարհի ոստիկան հրեշտակներդ ամսն օր
բիւրաւոր բողոքներ կը հանեն քո ատեան , և դու մորդոց
սիրան ու գործքերը քննելով՝ ըստ այնմ կը դատես : Եթզ աշ-
խարհիս վերաց մեղապարտ մարդ զմարդ կը դատի իւր օրէն-
քով , դու որ մարդոյն Աստուածն ես և գերազոյն դատաւոր ,
մըթէ՛ քո արդարութիւն՝ իրաւունք չունի՝ աշխարհիա ազի-
րատներու դատաստանը տեսնալ :

Դա՛տ արտ , Տէր , դա՛տ արտ , զի քո օրէնքն ու դա-
տաստան միայն ճշմարիտ է . համառօտէ՛ միանգամայն քո եր-
կայնամիտ դատն ու վճիռ չարերուն վերայ . լինչպէս կը պա-
դատէր քո ծառայն Դաւիթ , նովին ձայնիս կը պազարիմք
քեզ :

Դա՛տ արտ , Տէր , դա՛տ արտ , զի մեր աշխարհ լցաւ ա-
նիրաւոթեամք : Եւ դու գիտես , Տէ՛ր արդար և ազատարար ,
զի մեր փրկութիւն ի քէն է ի ժամանակի նեղութեան :

ՎԵՐԶ



Ա.ԶԱՑ Մ.Ց.ՏԵՆ.Ա.ՀԱՐ

Զարգարեան Գրաստանը այս շաբթով պիտի հրատարակէ
Վն ու նոր ամէն տեսակ աղքացին ու հայրենասիրակոն գոր-
ծեր։ Արդէն հրատարակուուծ են։

1.	Սեւ Հոգեր կամ Յետին Գիւեր Առաւտեան, Թուարերդ,	
	Պետրոս Դուրեանի	2
2.	Աւերակ (Բանի լիւաւակներ), Վահան Թոփոլենցի	1
3.	Ընդարձակ Հայկական Երգարան, Ա. Հասոր	3.50
4.	Վականյան Խրիմեան Հայրիկի	1.50
5.	Երգեր եւ Տաղեր, Պ. Դուրեան (պատկերով)	1
6.	Հայոցի Խրիմեան Հայրիկի	2
7.	Ընդարձակ Հայկական Երգարան, Բ. Հասոր	3.50
8.	Աւերումն Անի Մայրաբաղման, թարգմ. Պ. Դուրեանի	2
9.	Յանին Տունը, (Բանափ լիշտանակներ), Լ. Շամբեան	4
10.	Եղիս Տեմիրնիխուահեան, Լ. Էսէնանեան (պատկերով)	1.50
11.	Երիտասարդ, Տ.ք., Լուի Պէսոր թրգմ. Խօզմէրի	1.50
12.	Ժամանակ եւ Խորհուրդ իւր, Խրիմեան Հայրիկ,	
	Համացիր ինպատ Վահան Վարագոյ Վանքին	1.50

ՄՈ.ՄՈՒՏ.Բ ՏԱ.Ա

12. Զայնագրուած Հայկական Երգարան։—Խրախուուած
մար երգարանի գուած ջերմ լուղաններութենէն՝ բացած ենք բա-
ժանորդագրութիւնն Զայնագրուած Հայկական Երգարանի որ իր
մէջ պիտի պարտասկէ 250 հոտի չին ու նոր երգեր, ամ-
րագծն ար Եւրոպական նօթանիրով եղանական որուած, նույ-
լուաննկարներ ու կենացգրութիւններ։ Անրազջ հասորը պիտի
բազկանոց 20 տեսաբնիրէ այսինքն 320 էջերէ, և իւրա-
քանչիւր անոր պիտի ծախուի ձեռքէ 40 փարացի, բաժանոր-
դաղրութիւնն ամբողջ գործին 20 զրուչ, տաղաղրութիւնը աւար-
սել յետոց պիտի վաճառակի 30 զրուչ։

Գիմել Զարդարեան Գրատուն, Կ. Պոլիս,

Զարդարացիւր, թիւ 24-26

ՀՀ Ազգային գրադարան



NL0150195

